ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի , ֆիզկուլտուրա (30,5 դասաժամ , երկու ուսուցիչ), քիմիա (11 դասաժամ), ռուսաց լեզու (5,5 դասաժամ), ինֆորմատիկա (8,5 դասաժամ), ֆիզիկա (13 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (ձև 1),

2. 1 լուսանկար 3×4 չափի,

3.բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

4.անձը հաստատող փաստաթուղթ,

5.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),

6.ինքնակենսագրություն(ձև 5),

7.այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

10.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 7-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին,Շահումյանի միջնակարգ դպրոցում,հասցե՝ գ.Շահումյան,Ի.Հարությունյան 1փակուղի ,շենք 4:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093845657:

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝ /Ժաննա Արզումանյան/